

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՅՐԸ

Իրավաբանական բաժնի իրավաբան

Լրիվ աշխատաժամանակ

Անորոշ ժամկետով

ՀՀ, ք.Երևան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Իրավաբանական բաժնի իրավաբանի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են դատական հայցադիմումների կազմումը, դատական ներկայացուցչության իրականացումը և ներքին իրավական սպասարկումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հայցադիմումների, դիմումների, դրանց պատասխանների, հակընդդեմ հայցերի, այլ փաստաթղթերի կազմում,
- Դատական ներկայացուցչության իրականացում,
- Ընկերության շահերի պաշտպանության ապահովում պետական իրավասու մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում,
- Ընկերության խնդրահարույց հաճախորդների հետ բանակցությունների վարում, վարկի գումարի հետ գանձման աշխատանքների իրականացում,
- Ընկերության ներքին և անհատական իրավական ակտերի, պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակում, իրավական փորձաքննության իրականացում, եզրակացության տրամադրում,
- Ընկերության հաճախորդների և գործընկերների դիմում-բողոքների վերաբերյալ պատասխանների կազմում,
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն իրավաբանական, մագիստրոսի աստիճանը առավելություն է,
- փաստաբանի որակավորման առկայությունը ցանկալի է,
- ՀՀ ֆինանսաբանկային համակարգում առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձը ցանկալի է,
- Հայերենի գերազանց իմացություն, Անգլերենի իմացությունը ցանկալի է,
- Համակարգչի հետ աշխատանքների գործնական հմտություններ՝ MS Office (Excel, Word, Outlook) փաթեթների լավ իմացություն, տվյալների բազաների հետ աշխատանքի փորձ,
- հանձնարարված առաջադրանքները ժամանակին և պատշաճ որակով կատարելու ունակություն,
- սեղմ ժամկետներում աշխատանքների կատարման հմտություն,
- վերլուծելու ունակություն, կազմակերպչական ձիրք,
- արդյունքների ստացման նպատակասլացություն
- սթրեսային իրավիճակներում աշխատելու կարողություն,
- լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն,
- հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- շփվողականություն, պարտաճանաչության և պատասխանատվության բարձր զգացում,
- աշխատանքի հիմնական մասը գրասենյակից դուրս ախատելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Երևան 0032, Սեբաստիա 123 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ **հստակ նշելով պաշտոնը**, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՉԲԸ՝

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

30 օգոստոսի 2019

20 սեպտեմբերի 2019